ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 02.05.2024թ.

Ժամը 15[40]

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետ, գնդապետ՝ Կ. Գրիգորյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՋՈՒ ՍՎ ՀՀՍ ծառայության պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Հ. Զաքարյանը:

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՍՎ ՀՀՍ ծառայության պլանավորման և ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ՝ Հ. Զաքարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 1-ին բաժնի գլխավոր մասնագետ՝ Դ. Մաթևոսյան:

Բացակայում է՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության պետ, գնդապետ՝ Կ. Գրիգորյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի և ՀՀ Ֆինանսների Նախարարության N 03/12-1/2884-2024 գրության՝ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի, «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի, «Գևորգ Դուրյան» Ա/Ձ-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով հարցում ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

3.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

5 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

6. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

1. ԳՀ ընթացակարգին «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի, «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի, «Գևորգ Դուրյան» Ա/Ձ-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով հարցում ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչություն.

(Գ. Պողոսյան)

1.1 Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի և ՀՀ Ֆինանսների Նախարարության N 03/12-1/2884-2024 գրության, 02.05.2024թ. գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցվել է՝ «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի, «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի, «Գևորգ Դուրյան» Ա/Ձ-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները հավաստող փաստաթղթերի իսկությունը ստուգելու նպատակով ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչություն հարցում կատարելու նպատակով:

1.2 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով գնանշման հարցմանի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը կնշանակվի ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից հարցման պատասխանը ստանալուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

10.05.2024թ. շարունակելով հայտերի գնահատման նիստը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ համաձայն ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության ՊՆ/520-1066 առ. 07.05.2024թ. գրության «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ի, «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի, «Գևորգ Դուրյան» Ա/Ձ-ի, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և «ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումները իսկական են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Դավիթ Էներջի» ՍՊԸ
2	«Ի-Թրեյդ» ՍՊԸ
3	«Գևորգ Դուրյան» Ա/Ձ
4	«Հայանտառ» ՊՈԱԿ
5	«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ
6	«Տերմոպրոտեկտ» ՍՊԸ
7	«ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

3.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմաններին (պահանջներին) համապատասխանող, բացառությամբ «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝

«Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի՝ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտի ապահովումը ներկայացված է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես՝

Ըստ «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի (ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ հավելված 1, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր՝ հավելված 1.1 և գնային առաջարկ՝ հավելված N 2) «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի միայն 2-րդ չափաբաժնի մասով, որի Գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը) հրավերով սահմանված է 79 600 000 ՀՀ դրամ: «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է 75 600 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) գնային առաջարկ, իսկ կանխիկ փողի ձևով հայտի ապահովման վճարման հանձնարարականը ներկայացվել է ՝ 3 780 000 ՀՀ դրամ-ի չափով:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված է՝ հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է գնման գնի հինգ տոկոսին: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ

որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Հաշվի առնելով վերոգրյալը, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ «Ի-Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովումը ներկայացված է ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

4.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Չ/Մ	Քանակը	Գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման գինը)	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	Փայտե արկղեր (122 մմ ՌՍ հրթիռի արկղ)	հատ	1000	33 000 000	«Տերմոպրոտեկտ» ՍՊԸ	26 415 610	5 283 122	31 698 732
					«Գևորգ Դուրյան» Ա/Ձ	26 500 000	5 300 000	31 800 000
					«Հայանտառ» ՊՈԱԿ	27 000 000	5 400 000	32 400 000
					«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	27 072 500	5 414 500	32 487 000
					«ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ	32 990 000	0	32 990 000
2	Փայտե արկղեր (155մմ ԲՄ(ԲԲ) արկի արկղ)	հատ	2000	79 600 000	«Դավիթ Էներջի» ՍՊԸ	49 750 000	9 950 000	59 700 000
					«Հայանտառ» ՊՈԱԿ	55 000 000	11 000 000	66 000 000
					«ԽՈՐ ԱՐՄԱՏ» ՍՊԸ	59 990 000	0	59 990 000
					«Ի-Թրեյդ» ՍՊԸ	63 000 000	12 600 000	75 600 000
					«Հայր և որդի Գյոդակյաններ» ՍՊԸ	65 000 000	13 000 000	78 000 000

4.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են:

4.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

5.1 13.05.2024թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Տերմոպրոտեկտ» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչվեց «Դավիթ Էներջի» ՍՊԸ-ն:

5.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկներ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

6.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-4/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող՝ Հ. Զաքարյան

Գնահատող՝ Դ. Մաթևոսյան

Գնումները համակարգող՝ Գ. Պողոսյան